ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Գերմանական համագործակցություն DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by giz

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

ՀՀ պատական կառավարման ակադեմիա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՄՈԴՈՒԼ 1.

Համայնքի ավագանուն՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունները

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Երևան, 2024

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ)

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.

Ուժեղ քամու հետևանքով շրջվել են համայնքի փողոցներից մեկի լուսավորության հենասյուները՝ կտրելով էլեկտրահաղորդալարը, և տվյալ փողոցի մի հատվածը մնացել է առանց լուսավորության: Համայնքի ավագանու խմբակցություններից մեկը (ընդդիմադիր) հրատապ հրավիրում է խմբակցության ժողով և որոշում է հանդես գալ ավագանու արտահերթ նիստ հրավիրելու նախաձեռնությամբ, քանի որ վթարավերականգնողական աշխատանքների կատարման և անհրաժեշտ նյութերի ձեռքբերման գնումները կատարելու համար բյուջեից գումար հատկացնելու անհրաժեշտություն է առաջացել: Խմբակցության ներկայացուցիչը գրավոր դիմում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ավագանու արտահերթ նիստի նախաձեռնության ձևաթուղթ տրամադրելու և իրավական աջակցություն ցուցաբերելու խնդրանքով:

Ինչպիսի՞ լուծում կարող է ստանալ գործընթացը:

Լուծում 1. (ոչ ցանկալի)

Խմբակցության դիմումը ստանալու օրվանից անցնում է երկու օր, սակայն աշխատակազմի քարտուղարը չի տրամադրում ավագանու արտահերթ նիստի նախաձեռնության ձևաթուղթը և մերժում է իրավական աջակցություն ցուցաբերելու խնդրանքը՝ պատճառաբանելով, որ նախաձեռնողներն իրենք կարող են կազմել ձևաթուղթը և ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը: Համապատասխան հմտություններ չունենալու, ինչպես նաև խմբակցության փորձագետի բացակայության պատճառով խմբակցության՝ ավագանու արտահերթ նիստ հրավիրելու նախաձեռնությունը ձախողվում է: Համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու և հենասյուները վերականգնելու համար գումար հատկացնելու մասին որոշման նախագիծը համայնքի ղեկավարը ներկայացնում է ավագանու հերթական նիստի քննարկմանը: Արդյունքում գործընթացը ձգձգվում է, և համայնքի տվյալ փողոցի վթարված հատվածը տևական ժամանակ մնում է առանց լուսավորության:

Լուծում 2. (ցանկալի տարբերակ)

Խմբակցության դիմումը ստանալու օրվանից անցնում է երկու օր, սակայն աշխատակազմի քարտուղարը չի տրամադրում ավագանու արտահերթ նիստի նախաձեռնության ձևաթուղթը և մերժում է իրավական աջակցություն ցուցաբերելու խնդրանքը՝ պատճառաբանելով, որ նախաձեռնողներն իրենք կարող են կազմել ձևաթուղթը և ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը: Խմբակցության անդամները՝ խմբակցության փորձագետի օգնությամբ, ինքնուրույն կազմում են ավագանու արտահերթ նիստի

նախաձեռնության ձևաթուղթը, որտեղ նշվում են նախաձեռնողների անուն-ազգանուն-հայրանունները, որոնց թիվն անցնում է ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ երրորդից, նրանց ստորագրությունները, արտահերթ նիստի օրակարգը, նշանակվում է նիստի անցկացման ժամկետը՝ նախաձեռնությունից հետո երրորդ աշխատանքային օրը, կցվում են համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու և հենասյուները վերականգնելու համար գումար հատկացնելու, հրատապ գնում կատարելու թույլտվության մասին որոշման նախագիծը, դրա հիմնավորումը, ինչպես նաև ծախսերի նախահաշիվը: Փաստաթղթերի փաթեթը նույն օրը տրամադրվում է համայնքի ղեկավարին: Սահմանված կարգով հրավիրվում է արտահերթ նիստ, կայացվում է համապատասխան որոշում, կազմակերպվում են հրատապ գնումները: Խմբակցության հսկողության ներքո բոլոր գործողությունները կազմակերպվում են օպերատիվ կերպով: Արդյունքում սեղմ ժամկետում փոխարինվում են վթարված հենասյուները, և էլեկտրացանցն արագ վերականգնում է փողոցի տվյալ հատվածի լուսավորությունը:

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.

Ավագանու հերթական նստաշրջանի ավարտից հետո համայնքի ղեկավարը ավագանու հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկում է ավագանու անդամներից մեկի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշման նախագիծ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի ավելի քան կեսից:

Ինչպիսի՞ լուծում կարող է ստանալ գործընթացը:

Լուծում 1. (ոչ ցանկալի)

Ավագանու համապատասխան իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը համայնքի ղեկավարից ստանում է ավագանու հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված՝ ավագանու անդամներից մեկի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշման նախագիծը: Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որի ժամանակ հանձնաժողովի անդամներն ուսումնասիրում են որոշման նախագիծը և համայնքի ղեկավարի հիմնավորումն այն մասին, որ ավագանու անդամը մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի ավելի քան կեսից: Դրանից բացի, հանձնաժողովը որևէ այլ գործողություն չի իրականացնում և նախագծի մասին տալիս է դրական եզրակացություն: Ավագանու նիստում քննարկվում է տվյալ հարցը և, հիմք ընդունելով մշտական հանձնաժողովի եզրակացությունը, ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունվում է որոշում՝ ավագանու անդամներից մեկի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Լուծում 2. (ցանկալի տարբերակ)

Ավագանու համապատասխան իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը համայնքի ղեկավարից ստանում է ավագանու հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված՝ ավագանու անդամներից մեկի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշման նախագիծը: Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որի ժամանակ հանձնաժողովի անդամներն ուսումնասիրում են որոշման նախագիծը և համայնքի ղեկավարի հիմնավորումն այն մասին, որ ավագանու անդամը մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի ավելի քան կեսից: Միաժամանակ, հանձնաժողովը աշխատակազմի քարտուղարից պահանջում է ներկայացնել ավագանու տվյալ անդամի անհարգելի բացակայությունների արձանագրված փաստերի մասին տեղեկանք, ինչպես նաև հրավիրում է ավագանու տվյալ անդամին և լսում նրա բացատրություններն իր բացակայությունների պատճառների մասին: Քննարկումների արդյունքում հանձնաժողովը պարզում է, որ աշխատակազմի քարտուղարի ներկայացրած տեղեկանքում բացակայում են ավագանու մի քանի նիստերից ավագանու տվյալ անդամի բացակայությունները անհարգելի լինելու արձանագրված փաստերը: Իսկ ավագանու տվյալ անդամը հանձնաժողովին է ներկայացնում բժշկական փաստաթղթեր իր հիվանդության մասին, որոնք համընկնում են ավագանու մի քանի նիստերի օրերի հետ, որոնցից նա բացակայել է: Արդյունքում պարզվում է, որ ավագանու մեկ հերթական նստաշրջանի ընթացքում ավագանու անդամը անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կեսից ոչ ավելիից: Ավագանու իրավասու մշտական հանձնաժողովը ներկայացված նախագծին տալիս է բացասական եզրակացություն: Ավագանու նիստում քննարկվում է տվյալ հարցը և, հիմք ընդունելով մշտական հանձնաժողովի եզրակացությունը, ավագանու անդամներից մեկի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշման նախագծին ավագանու անդամների մեծամասնությունը դեմ է քվեարկում: Որոշումը չի ընդունվում:

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.

Ավագանու նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է համայնքի վարչական տարածքում գտնվող հատուկ նշանակության հողամասի (քրեակատարողական հիմնարկի սպասարկման) ընդլայնման մասին որոշման նախագիծ: Քննարկվում է նիստը դռնբաց կամ դռնփակ անցկացնելու հարցը:

Ինչպիսի՞ լուծում կարող է ստանալ գործընթացը:

Լուծում 1. (ոչ ցանկալի)

Համայնքի ղեկավարն առաջարկում է նիստն անցկացնել դռնփակ՝ հիմնավորելով, որ քննարկվող որոշման նախագիծը վերաբերում է հատուկ իրավական ռեժիմով կարգավորվող հողամասին, և տեղեկության տարածումը ցանկալի չէ: Ավագանու որոշ անդամներ հնչեցնում են կարծիք, որ անհրաժեշտ է պահպանել ավագանու գործունեության հրապարակայնության և թափանցիկության սկզբունքը: Քվեարկության է դրվում նիստը դռնփակ անցկացնելու հարցը, որին կողմ են քվեարկում նիստին ներկա ավագանու անդամների թվի կեսը: Որոշումը չի ընդունվում: Ավագանու նիստն

անցկացվում է դռնբաց: Արդյունքում խախտվում են գաղտնիք պարունակող տեղեկության պահպանման կանոնները, իսկ ավագանու անդամները կրում են օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկության հրապարակման և տարածման համար պատասխանատվության ենթարկվելու ռիսկը:

Լուծում 2. (ցանկալի տարբերակ)

Համայնքի ղեկավարն առաջարկում է նիստն անցկացնել դռնփակ՝ հիմնավորելով, որ քննարկվող որոշման նախագիծը վերաբերում է հատուկ իրավական ռեժիմով կարգավորվող հողամասին, և անհրաժեշտ է պահպանել գաղտնիք պարունակող տեղեկություններ չտարածելու կանոնները: Քվեարկության է դրվում նիստը դռնփակ անցկացնելու հարցը, որին կողմ են քվեարկում նիստին ներկա ավագանու անդամների թվի 2/3-ը, որոշումն ընդունվում է: Նիստն անցկացվում է դռնփակ, որին ներկա են գտնվում միայն ավագանու անդամները, նիստը վարողը և արձանագրողը: Նիստը վարողը նիստի սկզբում ավագանու անդամներին զգուշացնում է օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկության հրապարակման և տարածման համար պատասխանատվության մասին: Արդյունքում դռնփակ նիստը համայնքի պաշտոնական համացանցային կայքում առցանց չի հեռարձակվում, նիստի արձանագրությունը և նիստում ընդունված որոշումը չեն հրապարակվում համայնքի պաշտոնական համացանցային կայքում: